ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

11 փետրվարի 2014 թվականի N 11-Ա

ք. Հրազդան

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<բ>> կետի և 5-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ **կարգադրում եմ.**

1. ***Վահագն Վարդանյանին*** 2014 թվականի փետրվարի 11-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2012 թվականի հունվարի 9-ին կնքված N 44 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև ընտրության արդյունքում նոր գործադիր տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Վահագն Վարդանյանին***:

3. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ